# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/08» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 16 » « փետրվարի » 2018թ.**
**ժամը 10 ⁰⁰**

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) | Ռ.Չոբանյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | Մ.Այդինյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | Գ.Կյատիկյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | Հ.Հովհաննիսյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | Ա.Փաշայան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) | Լ.Ձոհրաբյան |

**1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/08» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.**

---

(Ռ.Չոբանյան)

1.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/08» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2018 թվականի փետրվարի 16ին, ժամը 10:00-ին, ՀՀ բնապահպանության նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3 շ., 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

**2. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/08» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.**

2.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/08» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2018 թվականի փետրվարի 15-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Սեգ» ՍՊԸ-ի, «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի և «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

**3. Հանձնաժողովը որոշեց՝**

---

(Ռ.Չոբանյան)

3.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ չափաբաժիններ 1, 2 և 3-ով մրցույթի հաղթող ճանաչել՝ «Սեգ» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 4, 6, 7 և 8-ով՝ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին, չափաբաժիններ 5 և 9-ով՝ «Բևեռային ուղի» ՍՊԸ-ին:
3.2. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:
3.3. Պայմանագրի կնքման նպատակով «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/08» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին՝ անգործության ժամկետի ավարտից հետո, ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:
3.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:**

| | | |
|---|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) | ______ | Ռ.Չոբանյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | ______ | Մ.Այդինյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | ______ | Գ.Կյատիկյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | ______ | Հ.Հովհաննիսյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | ______ | Ա.Փաշայան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) | ______ | Լ.Ձոհրաբյան |